ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-24/2 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 10.04.2024թ. N 114/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.04.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Պատուրյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Ապրեսյանը, Վ.Սարդարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

-ՊԵԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-24/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Պատուրյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-24/2 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու համար 11.04.2024թ. էլեկտրոնային փոստի միջոցով հրավեր էր ուղարկվել «Նոար Գրուպ» ՍՊԸ-ին (Հասցե՝ ք.Երևան, Ռուբինյանց 27, էլ. փոստ՝ noargroupllc@gmail.com, Հեռ. 077 99 89 77):

-ՊԵԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-24/2 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար «Նոար Գրուպ» ՍՊԸ-ն 16.04.2024թ. հայտ է ներկայացրել, որի առաջարկված գինը հետևյալն է.

Հ/Հ	Հ/Հ	Մասնակցի անվանումները	Ապրանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			նախահաշվային ընդհանուր գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գինը՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Նոար Գրուպ» ՍՊԸ	Համակարգչային պլանշետներ	22 350 000	20 %	26 820 000	**26 820 000**

Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումը իրականացնել նույն նիստի ընթացքում:

-«Նոար Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը (ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ համաձայն հավելված N 1-ի. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 1.1-ի. հայտի ապահովումը, գնային առաջարկը՝ համաձայն հավելված N 2-ի), որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հաշվի առնելով, որ «Նոար Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2024 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝

1. «Նոար Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

2 Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Նոար Գրուպ» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Նոար Գրուպ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Պատուրյան

Անդամներ՝ Վ.Ապրեսյան

Վ.Սարդարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան